ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 12, 1965 Общественные науки

Մանյա Ղազարյան

ՀԱԿՈԲ ՀՈՎՆԱԹԱՆՅԱՆԻ ՆՈՐԱՀԱՅՏ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Անվանի նկարիչ Հակոբ Հովնաթանյանի մասին գրավոր աղբյուրները բավականին սուղ են։ Դրանցից մեկը, որը կրում է «Ի՞նչ է կատարվում Թիֆլիսում» խորագիրը[1]*, նկարչի կենդանության օրոք գրված միակ հոդվածն է, որտեղ բնորոշվում է Հակոբ Հովնաթանյանի դերը Թիֆլիսի գեղարվեստական կյանքում։ Այդ հոդվածում նշվում է նաև, որ նա նկարել է Կովկասի փոխարքա Ե. Ա. Գոլովինի դիմանկարը։ Հայտնի է, որ 1840 թ. Ե. Ա. Գոլովինի գեղանկարչական դիմանկարը Հ. Հովնաթանյանն ուղարկել է Պետերբուրգ և Գեղարվեստների ակադեմիայի կողմից արժանացել «դասական նկարչի» կոչման։*

Վրացական ՍՍՌ արվեստի թանգարանում պահպանվել է Ե. Գոլովինի մի դիմանկարը (կտ. յուղ. 87×64), որի ետևում, շրջանակին, հնուց փակցված թղթի վրա գրված է, թե դա այն աշխատանքն է, որի համար Մկրտում Հովնաթանյանը (պետք է լինի՝ Հակոբ—Մ. Ղ.) Պետերբուրգի գեղարվեստների ակադեմիայից ստացել է «դասական նկարչի» կոչում։ Դիմանկարի գեղարվեստական մեկնաբանությունը, նրա կոմպոզիցիոն լուծումը հեռու է գիմանկար ստեղծելու հովնաթանյանական մեկնաբանությունից։ Ե. Ա. Գոլովինի մեկ այլ դիմանկարի հանդիպում ենք Մեծ իշխան Նիկոլայ Միխայլովիչի նշանավոր հավաքածուում[2]*, որն իր ոճական բոլոր առանձնահատկություններով կապվում է նկարչի մյուս դիմանկարների հետ։ Հայտնի է, որ Ե. Ա. Գոլովինի վերոհիշյալ գիմանկարից պատրաստվել է վիմագիր աշխատանք և ուղարկվել Թեհրանի ու Թավրիզի ռուսական միսիաներին՝ այնտեղ վաճառելու նպատակով*[3]*։ Մինչ այժմ անհայտ էր այդ վիմագիր դիմանկարի տեղը*[4]*։ Սակայն վիմագիր նկարներին նվիրված հետաքրքիր աշխատություններից մեկում*[5] *նշված է նաև Հակոբ Հովնաթանյանի այդ աշխատանքի վիմագրության մասին, որը քարի վրա փորագրել է Կ. Ուլրիխը (Մ. Վորոնցովի չորս դիմանկաբները, գեներալ*

---

1 «Иллюстрация», М., 1846, № 20, стр. 320.

2 «Русские портреты», СПб, 1909, т. 3, репродукция № 158. *Այս մասին մեզ հայտնել է արվեստաբան Ռ. Դրամբյանը։ Ե. Գոլովինի դիմանկարը գտնելու ուղղությամբ մեր որոնումներն ապարդյուն անցան։ Վերոհիշյալ հավաքածուի հեղինակներին հանդիպում ենք Էրմիտաժի արխիվային բաժնում պահպանվող թանգարանային ֆոնդի 1920-ական թթ. գրքերում, որտեղ սակայն այս դիմանկարի մասին ոչինչ չկա։*

3 *Փաստաթղթերը, որոնք պահպանվում են Վրացական ՍՍՌ պետական կենտրոնական պատմական արխիվի № 11 ֆոնդում, հրապարակել է Մ. Մկրտչյանը, «Տեղեկագրի» 1955 թ. № 3։*

4 *Այդ վիմագիր դիմանկարին անծանոթ են եղել վիմագրական և փորագրական դիմանկարների շատ անվանի գիտակ մասնագետներ։ Օր.* А. В. Морозов, Каталог моего собрания русских гравированных и литографированных портретов, М., 1912; Обольянинов, Русские граверы и литографы, М., 1913, Д. Ровинский, Подробный словарь русских гравированных портретов, СПб, 1886, т. 1.

5 В. Я. Адарюков и П. А. Обольянинов, Словарь русских литографированных портретов, М., 1916, т. 1, стр. 245.

Զասի դիմանկարները քարի վրա էր փոխադրել նկարչի եղբայրը՝ Աղաթոնը) և տպագրվել է Պետերբուրգում, նշանավոր Պոլի արվեստանոցում։ Գնալով Վ. Ադերյուկովի վիմագիր դիմանկարների հավաքածուի հետքերով, Հակոբ Հովնաթանյանի աշխատանքի մեկ օրինակ հնարավոր եղավ գտնել Մոսկվայի Ա. Պուշկինի անվան կերպարվեստի թանգարանի գրավյուրայի բաժնում (№ 44337)։

Ե. Գոլովինը պատկերված է Թիֆլիսի հալիվ ընդգծվող բնանկարի ֆոնի վրա (հավանաբար վիմագրի կողմից կատարված հավելում է), հանդիսավոր համազգեստով։ Չինական սպիտակ թղթի վրա հետաքրքիր լուծված է դիմանկարի կառուցման հովնաթանյանական արտահայտիչ ուրվագիծը։ Ուշագրավ է, որ այն կատարված է «Русские портреты» գրքում տեղավորված Ե. Գոլովինի դիմանկարից, սակայն, գեղանկարչական աշխատանքին բնորոշ փափկությունը, դեմքի որոշակի արտահայտությունը, այն ամենը, ինչ Հակոբ Հովնաթանյանի դիմանկարներին տալիս է լիրիկական հնչողականություն և հեռու պահում իր ժամանակի մոդայիկ հանդիսավոր դիմանկարներից, վիմագրության մեջ կորել է և բավական հեռացել բնագրից։